

Արժեքավոր ներդրում Արցախի բարբառի և բանահյուսության քննության մեջ: Վերջին երկու տասնամյակներին հայ բարբառագիտության ասպարեզ մուտք գործեց և իր գիտական վաստակով նրանում հաստատուն իր նիշը նվաճեց շնորհաշատ մի լեզվաբան՝ Արմեն Յուրիի Սարգսյանը: Նրա գիտական պրպտումների դաշտը «արցախական աշխարհի հոգևոր տիեզերքի նշխարներն» են (ձևակերպումը Ս. Սարինյանինն է), Արցախի բարբառը և նրանով ստեղծված բազմահարուստ բանահյուսությունը: Ա. Սարգսյանի հրատարակած գրքերի վերնագրերի թվարկումն իսկ ստուգապես ցուցանում է հետազոտող – բանասերի գիտական հետաքրքրությունների ընդգրկման շառավիղը. «Արցախյան հանելուկներ» (2002), «Արցախյան ավանդություններ» (2007), «Արցախի բանաձևային բանահյուսությունը» (2009), «Արցախյան առակներ» (2011), «Արցախյան զվարճախոսություններ» (2014) և այլն, որոնք, հեղինակի իսկ վկայությամբ, արդյունք են անձամբ իր կողմից և իր ղեկավարությամբ կատարված մեծածավալ բանահավաքչական և հետազոտական աշխատանքի:

Այս աշխատանքների և ընդհանրապես հեղինակի գիտական գործունեության յուրատեսակ հանրագումարը, սակայն, կարելի է համարել վերջերս լույս տեսած երեք մեծադիր հատորները՝ «Ղարաբաղի բարբառի բառարանը» (2013, 846 էջ), «Արցախի բանահյուսությունը» (2015, 748 էջ), և Շ. Մինասյանի հեղինակակցությամբ՝ «Ղարաբաղի բարբառի դարձվածաբանական բառարանը» (2017, 568 էջ):

Չի կարելի ասել, անշուշտ, թե Արցախի բարբառը և նրանով ստեղծված բանահյուսական ժառանգությունը դուրս էին մնացել հայագետների տեսադաշտից: Հիշենք, որ բարբառին առանձին ուսումնասիրություններ են նվիրել Հ. Աճառյանը («Քննություն Ղարաբաղի բարբառի», 1901), Կ. Դավթյանը («Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը», 1966), տարբեր առիթներով բարբառին անդրադարձել են Ա. Ղարիբյանը, Գ. Զահուկյանը, Ա. Գրիգորյանը, Լ. Հովհաննիսյանը և այլք, բարբառի բառանյութը ըստ հնարավորին ընդգրկված է Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հրատարակած «Հայոց լեզվի բարբառային բառարանում»: Բազմաթիվ ու բազմազան են նաև Արցախի բանահյուսությունը ներկայացնող ժողովածուներն ու ուսումնասիրությունները:

Ա. Սարգսյանի հեղինակած բառարանները, ինչպես նաև բանահյուսական նյութերի հարուստ հավաքածուն շահեկանորեն առանձ-

նանում են Արցախի բարբառին և ընդհանրապես որևէ առանձին բարբառի նվիրված նմանատիպ աշխատությունների շարքում:

Նախ այդպիսին է «Ղարաբաղի բարբառի բառարանը» իր ընդգրկած նյութի ծավալի, ապա և դրա բառարանագրական մշակման որակի առումով: Երկարամյա հավաքչական աշխատանքի արդյունքում ստեղծվել է մի շտեմարան, որ պարունակում է Արցախի բարբառով հրատարակված բանահյուսական ամբողջ նյութը, նախկինում լույս տեսած բառարաններում ներկայացված արցախյան բառապաշարը, ինչպես նաև հեղինակի անձնական նախաձեռնությամբ և Արցախի համալսարանի ուսանողության և գյուղական ուսուցիչների օգնությամբ հավաքված ձեռագիր նյութը (մոտ 20000 էջ): Ինչպես նշում է հեղինակը «Բառարանի» ներածության մեջ, այդ նյութի տառադարձման ու բառարանագրական մշակման ընթացքում ինքն օգտվել է տվյալ խոսվածքը կրող առնվազն երկու բարբառախոսի ծառայությունից: Այս առնչությամբ հարկ է նշել, որ Ա. Սարգսյանը՝ որպես բանահավաք և բարբառագետ, առաջնային կարևորություն է տալիս բարբառային նյութը սկզբնաղբյուրին ըստ հնարավորին հարազատ ներկայացնելուն, խոսվածքի լեզվական նրբերանգի պահպանմանը, հանգամանքներ, որ այս կարգի աշխատությունների մեջ երբեմն երկրորդական են դիտվում:

Խնդրո առարկա երկու բառարանների գրեթե բոլոր բառահոդվածները օժտված են բնագրային վկայություններով: Բնական է, որ ներկայացված բառային և դարձվածային միավորների մի զգալի մասն էլ գրավոր վկայություններ չունի, քաղված է կենդանի բանավոր խոսքից. աղբյուրը հեղինակների անձնական դիտումներն են, ծայնագրություններն ու տեսագրությունները, Արցախի հեռուստատեսությամբ արձակված բարբառային հաղորդումները և այլն: Խոսքային վկայությունների առկայությունը, անշուշտ, բառարանների այս տեսակի գիտական արժեքի կարևոր բնութագրիչներից է: Պակաս էական չէ, սակայն, բառահոդվածի մյուս բաղադրատարրերի գիտական մշակման ընթացքը, որ երևան է հանում բառարանագրի մասնագիտական մակարդակն ու հմտությունը և մեծապես պայմանավորում է բառարանի արժեքը: Բառահոդվածը պարունակում է գլխաբառի վերաբերյալ ծագումնաբանական (բառի բնիկ կամ փոխառյալ լինելը, փոփառություն), լեզվաոճական (սոցիալական կամ վերաբերմունքային որևէ շերտի պատկանելը) տեղեկություններ: Հարկ է նշել, որ «Ղարաբաղի բարբառի բառարանում» արդեն իսկ պատշաճ տեղ ունեին դարձվածները, որոնք առավել ամբողջական ընդգրկումով ներկայացվեցին «Դարձվածաբանական բառարանում»:

Գաղտնիք բացած չենք լինի, եթե ասենք, որ բառարանագրի համար «փորձաքարի» արժեք ունեցող, նրանից մասնագիտական առավել մեծ հմտություն ու ջանք պահանջող գործը գլխաբառերի իմաստային

բացատրության հատվածն է, բազմիմաստ բառի գլխավոր և երկրորդական, ուղիղ և փոխաբերական իմաստների զատորոշումը, դարձվածների իմաստային խորքի ստույգ մեկնությունը (այս վերջին պարագան հատկապես կարևոր է բարբառային նյութի հետ գործ ունենալիս): Այս դժվար գործը, պետք է գոհունակությամբ արձանագրենք, Ա. Սարգսյանը հիմնականում հաջողությամբ է գլուխ բերել:

Իր մայրենի բարբառին գիտնականի մատուցած ծառայությունների այս հակիրճ ներկայացումը անշուշտ թերի կմնա, եթե անտես առնենք «Արցախի բանահյուսությունը» մեծադիր հատորը, որն ամփոփում է 1992-2014 թվականների ընթացքում հավաքած բանահյուսական նյութը՝ դասավորված հետևյալ երեք բաժիններում. 1. վիպական բանահյուսություն (հեքիաթներ, ավանդություններ, առակներ, զվարճախոսություններ), 2. քնարական բանահյուսություն (խաղիկներ և չափածո այլ ստեղծագործություններ) և 3. ասույթաբանական բանահյուսություն (առած-ասացվածքներ, անեծքներ, օրինանքներ և բարեմաղթանքներ, հանելուկներ, գյուղերի և քաղաքների մականուններ, մարդկանց մականուններ, շուտասելուկներ, հանգախաղեր): Ժանրերի այսպիսի բազմազանությունն, իհարկե, նորություն չէ նախկինում հրատարակված բանահյուսական հավաքածուների համար, սակայն այս գրքի նյութն իր հարստությամբ, թարմությամբ և, որ շատ կարևոր ենք համարում, գիտական բարեխիղճ մշակումով առանձնանում է եղածների մեջ: Ուշադրություն են գրավում այլոց կողմից գրեթե անտեսվող բանահյուսական տեսակների վերարծարծումները, օրինակ՝ գյուղերի, քաղաքների մականունները, որոնք ավելի շուտ դրանցում բնակվողների սեղմ, հաճախ էլ բավականաչափ դիպուկ բնութագրումներ են (առավելապես բացասական գծերի շեշտադրմամբ):

Ընդհանուր առմամբ այս գիրքը մեզ ներկայանում է որպես Արցախ աշխարհի հոգևոր գանձերի իրոք յուրատեսակ մի պահոց – շտեմարան, որի մշակութաբանական արժեքը դժվար է գերազնահատել:

Արժե ևս մեկ անգամ ընդգծել Արմեն Սարգսյանի գիտնական – հետազոտողի հույժ դրվատելի հատկանիշը՝ բժախնդրության աստիճանի գիտական բարեխիղճությունն ու պատասխանատու վերաբերմունքը իր հետազոտության առարկայի նկատմամբ: Նրա՝ վերևում հիշատակված գրքերը օժտված են տեսական բնույթի հանգամանալից ուսումնասիրություն – առաջաբաններով, ներկայացված են տեղեկություններ նյութերի գրառման վայրերի, ասացողների, գրառողների մասին:

Լիահույս ենք, որ Ա. Սարգսյանը նույն նվիրումով կշարունակի պեղել Արցախի հոգևոր աշխարհի անսպառելի շերտերը և նոր գրքերով կհարստացնի մեր բարբառագիտությունն ու բանագիտությունը:

ԼԵՈՆԻԴ ԹԵԼՅԱՆ